ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N86-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-027-0120-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Վարդանյանի դիմումը, գրանցամատյան թիվ 3257 համայնքային սեփականությանը պատկանող հողային տարածքի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 12102023-06-0049 վկայականը կազմված 2023 թվականի հոկտեմբերի 12-ին,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 10-ի թիվ 1940-Ն որոշումը , ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ՝ ավագանին որոշում է՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գտնվող՝ Անուշ Վարդանյանին վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրված հողամասը, ՀՀ կառավարության 10,06,2005թ թիվ 1940-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես Գյուղատնտեսական արոտավայր 06-027-0120-0012 ծածկագրով, որը Գյուլագարակ համայնքի ավագանու 26.04.2024թ.-ի Լոռի-7 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը հաստատելու մասին 38-Ա որոշմամբ փոխադրվել է բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի և մասնավորեցման ենթակա հողամաս է, ընդգրկված չէ ՀՀ Հողայի օրոնսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ուստի առաջնորդվելով վերը նշված օրենքներով բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության 06-027-0120-0012 ծածկագրի 0,35479 հա հողամասը 1200000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար / ՀՀ դրամ, ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Անուշ Վարդանյանին:

2.Անուշ Վարդանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու առուվաճառքի պայմանագիր:

3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն		—	—	—
Այվազյան Վրույր	—	—	—	բացակա
Գևորգյան Համլետ	—	—	—	բացակա
Քալաշյան Վարսենիկ	—	—	—	բացակա
Արոյան Տիգրան	—	—	—	բացակա
Տոնոյան Արփյոմ	—	—	—	բացակա-
Գրիգորյան Թամարա	—	—	—	բացակա
Սարգսյան Ալիկ	—	—	—	բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ/